Կիլիկիո Կաթողիկոսությունը: Այս առիթով Վեհափառ Հայրապետը եղբայրական իր ջերմ ողջույնը հղեց Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսին:

Հանդիպման ավարտին Վեհափառ Հայրապետը Լիբանանի նախագահին նվիրեց Հայ Եկեղեցու հոգևոր գանձերը պատկերող շքեղազարդ ալբոմ, ի պատասխան որի հնչեց նախագահի հայերեն «շնորհակալությունը»:

«Չեմ կարող իմ ուրախությունը չարտահայտել, որ Լիբանանի առաջին տիկինը հայ ազգի զավակ է և Լիբանանի ազնիվ քաղաքացի»,- ասաց Հայոց Հայրապետը:

Վերջում Լիբանանի նախագահը Նորին Սրբության ուղեկցությամբ եղավ Վեհարանի թանգարանում, ծանոթացավ հայ հոգևոր արժեքներին:

Լիբանանի նախագահին Մայր Աթոռ Ս. Էջմիածին ուղեկցում էին ՀՀ արտգործնախարար Վարդան Օսկանյանը, զույգ երկրների դեսպանները: Հանդիպմանը ներկա լիբանանյան պատվիրակության կազմում էր նաև հայազգի նախարար Սեպուհ Հովնանյանը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՌՉԱԿՎԱԾ Տ. ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊՍ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 17 մայիսի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մայիսի 15-ի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Նոր Նախիջևանի և Ռուսաստանի թեմի նախկին առաջնորդ Տ. Տիրան արքեպս. Կյուրեղյանին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական իշխանությանը անհնազանդ, հայ եկեղեցականի ուխտին անհարիր և Հայ Եկեղեցու կանոններին դեմ դատապարտելի գործողությունների համար:

Կարգալույծ արված Սրբազանն այլևս դասվում է աշխարհականների շարքը և կկոչվի ավազանի անունով՝ Ղազարոս Կյուրեղյան: